«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ «Հարսանեկան ծեսը քրիստոնեական կանոնների համատեքստում»

ԱՌԱՐԿԱ «Հայոց եկեղեցու պատմություն»

ՀԵՂԻՆԱԿ Հարությունյան Վերժինե

ՄԱՐԶ Արմավիրի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Մերձավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Բովանդակություն

Նախաբան ---------- 3

Գլուխ 1։ Հայոց եկեղեցու խորհուրդներ։ Պսակ ---------- 5

Գլուխ 2։ Պսակի բաղադրատարրերի (նշան և պսակ) կատարման կարգը ---------- 10

Վերջաբան ---------- 19

Օգտագործված գրականության ցանկ ---------- 20

Նախաբան

Հայ եկեղեցին, ինչպես Արևմտյան և Արևելյան եկեղեցիներն ընդունում է յոթ խորհուրդներ։ Պսակը հայ եկեղեցու խորհուրդներից մեկն է, որով սրբացվում է կապը երկու անձերի միջև։ Պսակի գլխավոր նպատակը որդեծնությունն է։

Ամուսնության միջոցով այր ու կնոջ միջև ձևավորվում է մի այնպիսի միություն, որը ոչ թե նյութական է, այլ՝ հոգևոր՝ փոխադարձ սիրո և համակրանքի վրա հիմնված։ Ամուսնության խորհուրդը կարող է երկրորդ անգամ կրկնվել, այսինքն՝ կրկնելի է։ Այն կատարվում է եկեղեցում հոգևորականի կողմից։ Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ, ինչպես՝ փոխադարձ հաճություն, մարմնական կատարելություն, չափահասություն, դավանական նույնություն, կանոնական հաստատություն։ Եթե ամուսնացողները չեն լրացնում այս պահանջները, ապա չեն կարող ամուսնանալ հայ եկեղեցում։

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մի շարք գործոններով։ Ըստ Աստվածաշնչյան պատվիրանի՝ Աստված մարդուն ստեղծելուց հետո պատվիրել է «Աճել և բազմանալ», որի գործնական իրականացումը տեղի էր ունենում հենց ամուսնության միջոցով։ Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս այս ծեսը շարունակում է կենցաղավարել՝ իր տարբեր դրսևորումներով՝ լինելով շատերի կյանքի անխուսափելի ուղեկիցը։ Բացի այդ, քանի դեռ արդիական է որդեծնությունը, ապա արդիական կլինի նաև այն օրինականացնող և սրբացնող ամուսնությունը։

«Հարսանեական ծեսը քրիստոնեական կանոնների համատեքստում» հետազոտական աշխատանքի նպատակն է անցյալի և ներկայի տեսանկյուններով բացահայտել ամուսնության ծեսը կանոնական համատեքստում՝ կարևորելով ամուսնացող զույգի օրհնությունը հենց Աստծո տանը՝եկեղեցում։

Այդ նպատակն իրականացվել է քննարկված հետևյալ հիմնախնդիրների համալիրում.

- Հայ եկեղեցու խորհուրդներ։ Պսակ
- Պսակի բաղադրատարրերի (նշան և պսակ) կատարման կարգը
- Պսակի խորհրդի չեղարկում՝ ամուսնալուծություն

Ամբողջական պատկերացում տալու նպատակով օգտագործվել է տարաբնույթ գրականություն, հատկապես կարևոր են Վ. Հակոբյանի, Մխիթար Գոշի աշխատանքները, Հ. Հովհաննիսյանի ուսումնասիրությունները, որոնցում հանգամանալից կերպով ներկայացվում են տարբեր ժամանակներում պսակի իրականացման կանոնները։

Գլուխ 1: Հայոց եկեղեցու խորհուրդներ: Պսակ

«Խորհուրդ» նշանակում է մեզնից ծածկված իրողություն կամ անտեսանելի իրողության արտահայտություն: Տաթևացին ասում է, որ «խորհուրդ է ծածկելոյ իրաց յայտնութիւնը»: Սբ. գրքի միջոցով հայտնվածների մեջ շատ բան է մեզ ներկայացնում որպես խորհուրդ, այսինքն՝ ըմբռնելի միայն հավատի աչքերով: Ուրեմն խորհուրդ ասելով հասկանում ենք խորհրդավոր, աստվածային մի բան, որ տեսանելի կերպով չենք կարող ընկալել, այլ՝ հոգևոր աչքերով, այսինքն՝ հավատով: «Խորհուրդ» բառը հունարեն թարգմանվում է «միսթերիոն» բառով, որ նշանակում է ծածկված, թաքնված բան[1]:

Եկեղեցու սուրբ խորհուրդ կոչում ենք եկեղեցու վարդապետների այն արարողության մասը և աստվածապաշտության այն կատարյալ արարողությունը, որով իսկապես յուրաքանչյուր ոք նախ Քրիստոսի և եկեղեցու իսկական և միակից անդամն է ճանաչվում և զինքն խոստովանում, և 2-րդ՝ իրականապես, թե՛ իբրև անհատ, թե՛ իբրև համայնքի մի անդամ՝ մտնում է Քրիստոսի հետ ամենամտերիմ և էական հաղորդակցության մեջ, և կենսական հաղորդակցության մեջ մնում, ամրանում և շնորհներ վայելում (Ա. Կորն., Է,17)[2]:

«Սուրբ խորհուրդը Աստվածային անտեսանելի շնորհի տեսանելի նշանն է»,- ասում է Սբ. Օգոստինոսը: Չնայած Արևմտյան և Արևելյան եկեղեցիների դավանության մեջ տարբերություններին՝ խորհուրդների թվի հարցում բոլորը միակարծիք են և ընդունում են 7-ը: Հայ եկեղեցին ընդունում է 7 սրբազան խորհուրդների գոյությունը, որոնք ներկայացնում և մեկնում է Տաթևացին:

Բողոքականության առաջացման շրջանում (ԺԵ-ԺԶ դդ.) խորհուրդների վերաբերյալ որոշ տարբերություններ առաջացան Նոր և Հին եկեղեցիների միջև: Բողոքականության եկեղեցին ընդունեց եկեղեցու 7 խորհուրդներից միայն 2-ը և այն էլ որոշ վերապահումներով: Այսպես, նրանք «խորհուրդ»-ի տակ տեսնում էին միայն «նշան և յիշեցում, որոնց արժէքը կախուած է անհատի հաւատից»: Լյութերը դրանք դիտում է որպես «հաւատն արթնացնելու միջոց», իսկ Կալվինը՝ «Քրիստոսի խօսքերի վրայ ընտրեալի մէջ վստահութիւն առաջացնող միջոց»: Այսինքն՝ խորհուրդներից հեռացնում են շնորհի ներգործությունը՝ թողնելով միայն արտաքին ծեսը[3]:

Ոչ միայն սուրբ և սրբարար են այդ խորհուրդները, այլև սուրբ է դրանց թիվը, ըստ որում, Աստծո ամենաբարության տեսանելի արդյունքները 7 օրում են կատարվել, նրա բոլոր կարգադրությունները իսրայելացոց մեջ 7 թվով են հիմնվել, և 7 թիվը պարունակում է իր մեջ թե՛ աշխարհի 4 կողմերն ու թե՛ Սուրբ Երրորդությունը, որ տիրում և սրբում աշխարհի բոլոր ծայրերը[4]:

Եկեղեցու խորհուրդները կատարվում են եկեղեցու սպասավորների՝ հոգևորականների միջոցով: Խորհուրդներից 1-ին 4-ը (մկրտություն, դրոշմ, ապաշխարություն, հաղորդություն) անհրաժեշտ են բոլոր հավատացյալների համար, իսկ վերջին 3-ը (պսակ-ամուսնություն, կարգ ձեռնադրության, կարգ հիվանդաց)՝ միայն ցանկացողներին և հատուկ պատրաստվածություն ունեցողներին: Մկրտությունը, Դրոշմը և Ձեռնադրությունը կատարվում են միայն մեկ անգամ, այսինքն՝

---

[1] Ա. Մայիլեան, Ոսկեփորիկ կրօնական գիտելիքների հանրագիտարան, մասն Բ, 1993, էջ 36:
[2] Արշակ Տեր-Միքելյան, Հայաստանյայց Սուրբ եկեղեցու քրիստոնեականը, Սբ. Էջմիածին, 2007, էջ 379:
[3] Ա. Մայիլեան, նշվ. աշխ., էջ 38:
[4] Արշակ Տեր-Միքելյան, նշվ. աշխ., էջ 386:

անկրկնելի են, պսակը կրկնվում է խիստ անհրաժեշտության դեպքում, իսկ ապաշխարությունն ու հաղորդությունը՝ ըստ հոգևոր կարիքի և անհրաժեշտության[5]: Խորհուրդների մատակարարության համար անհրաժեշտ են 3 տարրեր. 1. զգալի նշան. այսպես են կոչում խորհուրդների կատարման ընթացքում գործածվող նյութերը, օրինակ, ջուրը՝ մկրտության, ս. Մյուռոնը՝ Դրոշմի, հացը և գինին՝ Հաղորդության ժամանակ: 2. աղոթք, որը սրբագործում է խորհրդի զգալի նշանը: Խորհրդավարության ընթացքում երգվում են շարականներ, ընթերցվում աղոթքներ և Սուրբ գրքից հատվածներ: 3. օրինավոր պաշտոնյա, այսինքն՝ միայն ձեռնադրված հոգևորականը իրավունք ունի խորհուրդները մատակարարելու[6]: Հայաստանյայց եկեղեցու 7 խորհուրդներն են մկրտությունը, դրոշմը, ապաշխարությունը, հաղորդությունը, պսակ ամուսնությունը, կարգ հիվանդացը և կարգ ձեռնադրությանը, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձին էական նշանակությունը՝ ըստ իր գլխավոր խորհրդի: Մկրտությունը խորհուրդ է «Նոր մտնելոյն եկեղեցի» կամ ծննդյան, դրոշմը՝ «պատերազմողացն ընդդեմ թշնամոցն սատանայի» կամ զարգացման, հաղորդությունը՝ «վերստին զորացելոյն ի պատերազմի» կամ սննդյան, ապաշխարությունը՝ «վերստին կանգնելոյն, որք անկանին մեղօք և վերստին կանգնին ապաշխարութեան գործովք» կամ բժշկման, կարգ հիվանդացը՝ «ելելոյն ի կենցաղոյս և զերծանելոյն ի պատերազմէ» կամ ամոքման, ձեռնադրությունը՝ «սպասավորելոյն այսմ խորհրդոց» և պսակը՝ «նոր զինուորս ի ներս մուծանելոյ», որոնցով ամփոփվում է մարդկային կյանքի խորհուրդը[7]:

Մկրտություն: Մկրտությունը այն սրբազան խորհուրդն է, որը մեզ սրբում է մարդկային նախնական մեղքից, վերստին ծնունդ տալիս Սուրբ Հոգու շնորհած նորոգ կյանքով և Քրիստոսի եկեղեցու մեջ ընդունում: Մկրտությունը մի նոր ծնունդ է, որով ծնողական մարմնից ծնված մարմինը ծնվում է Հոգուց: Աստվածային ներգործությամբ ելնում է ջրից կամ վերածնվում ավազանից, մի նոր մարդ դառնում և Աստծո փրկագործական նոր ուխտի մեջ մտնում[8]:

Դրոշմ: Մկրտության անբաժան մասն է կազմում Դրոշմը: Դրոշմի արարողությունը մեր եկեղեցում կատարվում է մկրտությունից անմիջապես հետո: Դրոշմի ժամանակ օգտագործվում է Սբ. Մյուռոն, որը խորհրդանշում է նաև Սուրբ Հոգու ներկայությունը և աղդեցությունը դրոշմվողի վրա: Դրոշմի ժամանակ հոգևորականը մյուռոնով օծում է մկրտվածի ճակատը, աչքերը, քիթը, բերանը, թիկունքը, կուրծքը՝ սրտի կողմից, ձեռքերի ափերը և ծնկները[9]:

Ապաշխարություն: Այն եկեղեցու 7 խորհուրդներից 3-րդն է: Մեղավորը ճշմարիտ զղջումով և խոստովանությամբ թողություն է ստանում իր գործած մեղքերի և հանցանքների համար: Տաթևացու բնորոշմամբ «ապաշխարութիւնն է ցաւել վասն մեղաց, զոր գործեաց վասն անցեալ չարեացն լալ և լացովն վերստին, այլ ոչ առնել»: Ըստ Տաթևացու ապաշխարությունը իր մեջ ընդգրկում է երեք բան՝ սրտի զղջում, խոստովանություն և ապաշխարություն գործով, «քանի որ երեք ձևով ենք մեղանչում,- գրում է նա,- խորհրդով, խոսքով և գործով, ուստի պետք է երեք ձևով էլ ապաշխարենք»[10]:

Հաղորդություն: Նշանակում է հաղորդակցություն, հարաբերություն, միացում: Հաղորդակցությունը սիրո և սրբության խորհուրդն է, Քրիստոսի մարմնի և արյան փոխակերպված հացի և գինու ճաշակումով հավատացյալ քրիստոնյան հաղորդվում, միավորվում է Հիսուս Քրիստոսի հետ: Այս

---

[5] Ա. Մկրտչյան, «Նախաշաւիղ քրիստոնեական կրթության», Մայր աթոռ Սբ. Էջմիածին, 1990, էջ 68:
[6] Խորհուրդներ եկեղեցական, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002, էջ 447:
[7] Արշակ Տեր-Միքելյան, նշվ. աշխ., էջ 386:
[8] Նույն տեղ, էջ 396:
[9] Ա. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 80:
[10] Ա. Մայիլեան, նշվ. աշխ., էջ 65-66:

խորհուրդով մարդկային կյանքը միանում է աստվածայինին, սրբագործված հացի և գինու ճաշակումով Աստված բնակվում է մարդու մեջ (Հովհ. 6:57): Հաղորդությամբ հավատացյալները հաղորդակցվում են ոչ միայն Հիսուսի, այլ նրա միջոցով՝ նաև միմյանց հետ[11]:

Պսակ: Այն խորհուրդն է, որը նվիրագործում է ամուսնության համաձայնությունը: Այն նաև պսակվողներին մասնավոր շնորհ է տալիս, որպեսզի նրանք իրար կապվեն, սիրեն անկեղծ սիրով, հավատարիմ լինեն, կյանքի դժվարությունները միասնաբար, համբերությամբ ու քաջությամբ կրեն և իրապես քրիստոնյա ընտանիք կազմեն[12]:

Կարգ ձեռնադրության կամ քահանայության: Նշանակում է ձեռք դնել կրոնական աստիճան, կարգ կամ իշխանություն ստացողի գլխին: Ձեռնադրությամբ և օծմամբ եկեղեցում ծառայության կոչված անձը Սբ. Հոգու շնորհներ և նվիրապետական կարգ է ստանում եկեղեցական արարողությունը կատարելու, Ավետարանը քարոզելու և ուսուցանելու, ժողովրդին ապաշխարության հրավիրելու և նաև շնորհ փոխանցելու: Ձեռնադրությունը շնորհի և իմաստության ստացման խորհուրդն է, որը կոչվում է նաև շնորհաբաշխում, պարգևատրում: Այս խորհուրդը հաստատել է Մովսես մարգարեն, և ապա վերահաստատել՝ Քրիստոս[13]:

Կարգ հիվանդաց կամ վերջին օծում: Այն սուրբ խորհուրդն է, որով եկեղեցին Աստվածային շնորհ է մատակարարում իր հիվանդ հավատացյալների ապաքինման և կազդուրման համար, կոչվում է կարգ հիվանդաց: Քրիստոս ինքն հաստատեց այս սուրբ խորհուրդը, ըստ որում, հիվանդներից միմիայն հավատք էր պահանջվում և իր Աստվածային ազդեցությամբ, խոսքով կամ ձեռք դնելով բժշկում էր նրանց: Այդպես էլ նրա պատվերի համաձայն կատարում էին առաքյալները[14]:

Կարգ հիվանդացի խորհուրդը հայ եկեղեցում դիտվում է որպես վերջին օծման շարունակության լրացում: Հայ եկեղեցին Վերջին օծման խորհուրդը կատարում է Դրոշմի խորհուրդի ժամանակ (զգայարանների կնքումով): Իրենց նախնական վիճակում Վերջին օծումը և Կարգ հիվանդացը զուգակցված են եղել, բայց հետագայում օծման արարողությունն անջատվել է աղոթքի մասից, միավորվել Դրոշմի խորհուրդին և դարձել մեկ անգամ կատարվող խորհուրդ, իսկ մնացած մասը՝ Կարգ հիվանդացը, վերածվել է շարունակաբար կատարվող հոգևոր բարեպաշտական արարողության[15]:

Ամուսնությունը կամ պսակը Եկեղեցու 7 խորհուրդներից մեկն է, որովհետև սուրբ է Աստծո օրհնությամբ և կարևոր եկեղեցու տեսության տեսակետով: Այս խորհուրդը կատարվում է քահանայի ձեռքով (Առաք. ԼԴ), ընդհանրապես եկեղեցու մեջ սովորական օրերին[16]:

Պսակը եկեղեցու այն խորհուրդն է, որով Սուրբ Հոգու շնորհը՝ պսակադիր եկեղեցականի կողմից փոխանցվում է պսակվող ամուլին, որոնք այդ շնորհով եկեղեցական օրենքով իրար են միանում՝ կազմելով մեկ մարմին: Ամուսնությունը սոսկ մարմնական միավորում չէ, այլ փոխադարձ սիրո և նվիրումի հոգեկան միություն, որը գաղափարական կերպով պատկերացնում է Քրիստոսի միությունը իր եկեղեցու հետ[17]:

«Պսակ» նշանակում է «պսակ, թագ, գլխի վրա դրված զարդ», նաև «արևի շուրջը բակ»,

---

[11] Հաղորդություն, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002, էջ 525:
[12] Մեսրոպ վարդապետ, Կրօնի գիրք, Քրիստոնէական Հայաստանեայց Ս. Եկեղեցիի (Ե տարի), Պէյրութ, 1968, էջ 63:
[13] Ձեռնադրություն, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002, էջ 651-652:
[14] Արշակ Տեր-Միքելյան, նշվ. աշխ., էջ 475:
[15] Կարգ հիվանդաց, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002, էջ 478:
[16] Ն. Պողարեան, Կանոնագիտություն, Երուսաղեմ, 1992, էջ 26:
[17] Դերենիկ եպս., Հայաստանեայց առաքելական Սբ. Եկեղեցւոյ խորհուրդները, Պէյրութ, 1957, էջ 87:

«ամուսնության խորհուրդ կամ օրհնություն»: Համարժեք բառեր են պսագ, բսագ, փսագ, փսակ, փսայ, բսայ, որոնք բոլորն էլ նշանակում են «պսակ»-ի խորհուրդը[18]:

Ամուսնությունը պսակ է կոչվում, որովհետև խորհուրդի ժամանակ ամուսնացողների գլխին թագ կամ պսակ է դրվում (կույս ամուսնացողների գլխին՝ պսակ, իսկ այրիների՝ ուռ): Հետագայում այդ սովորությունը կատարվել է նարոտ կապելով: Նարոտը կամ ապարոշը իշխանության նշան ունեն: Հին ժամանակներում մեր արքաները թագ էին դնում և ապարոշ կապում՝ իբրև հայտարար նշան իրենց արքայական իշխանության: Այսօր հայ եկեղեցու եպիսկոպոսները, իբրև իշխան եկեղեցու, խույրի հետևից արտախուրակ են կրում՝ որպես իշխանության խորհրդավոր նշան: Այսպես էլ ամուսնության ժամանակ փեսան ու հարսը իրենց գլխների վրա նարոտ են կրում և կոչվում թագավոր ու թագուհի[19]:

Ամուսնությունը մարդկային կյանքի կարևորագույն երևույթներից մեկն է: Նկատի առնելով ամուսնության սովորությունները կամ օրենքները՝ կարող ենք 3 մասի բաժանել. ա. բնական դաշինք. այր ու կնոջ միջև կնքված ժամանակավոր կամ տևական հանգամանքով: բ. քաղաքական դաշինք կամ քաղաքական ամուսնություն. այր և կնոջ միացումը կատարվում է պետական իշխանության կողմից: գ. Կրոնական ամուսնություն. այր և կնոջ միացումը նվիրագործվում է կրոնական ծեսով[20]:

Ամուսնությունը հաստատվել է Աստծու կողմից մարդուն արարելուց հետո (Ծնն. Բ,18-24): Կանայի հարսանիքի ժամանակ Քրիստոս իր ներկայությամբ տվեց նրա աստվածային վավերացումը, ապա իր գործունեության ընթացքով վերահաստատեց նրա նվիրական նկարագիրը. «Դրա համար տղամարդը պիտի թողնի հորը և մորը ու պիտի գնա իր կնոջ հետևից. Եվ երկուսը մեկ մարմին պիտի լինեն» (Մատթ. ԺԹ,5-6):

Պողոս առաքյալը պատվիրում է կանանց հնազանդվել իրենց ամուսիններին. «որպես եկեղեցին հնազանդ է Քրիստոսին» (Եփես. Ե, 24): Նրա համար մարդու և կնոջ հարաբերությունը տիրոջ և ծառայի հարաբերություն չէ, այլ երկուսի կողմից արտահայտվող և պտղաբերող, գորովալից և զոհաբերող սեր է: Առաքյալը հրամայում է կանանց սիրել իրենց ամուսիններին. «որպէս ես Քրիստոս սիրեայ զեկեղեցի, եւ զանձն իւր մատնեց վասն նորա»: Այր և կին մի մարմին են և իբր այդ այրը զորավոր շարժառիթ ունի սիրելու իր կնոջը. «զի ոչ ոք երբէք ատեայ զանձն իւր», և քանի որ երկուսը մի մարմին են, «թողցէ այր զհայր եւ զմայր՝ եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ»[21]:

Պողոս առաքյալը այր և կնոջ ամուսնության միավորումը նմանեցնում է Քրիստոսի և եկեղեցու միավորմանը, և իսկապես, մարդկային ցեղի մաքուր և առողջ աճը և Քրիստոսի եկեղեցու բարգավաճումն ու պայծառությունը կախված են օրինավոր ամուսնության արդյունքից: Եվ քանի որ Քրիստոս և իր եկեղեցին նույնացած են իբրև մի մարմին, հարկ է, որ ամուսնացողները, իբրև գործադրիչներ աստվածային պատվերի (Աճեցէ՛ք և բազմացարո՛ւք) կատարելապես գիտակ և հավատարիմ լինեն իրենց միավորության ուխտին և նպատակին: Երկու էակների միությունը ինքնին խորհրդավոր է, և եկեղեցին 7 խորհուրդներից մեկը ուղղել է աստվածային պատգամով և օրհնությամբ այդ միությունը հիմնավորելուն:

Ամուսնությունը հիմնված է ողջախոհության վրա, քանզի որդեծնությունն է նրա նպատակը: Այր ու կին՝ իբրև եկեղեցու ճշմարիտ անդամներ, պետք է լինեն մաքրակենցաղ, որպեսզի իրենց

---

[18] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 109-110:
[19] Դերենիկ եպս., նշվ. աշխ., էջ 87:
[20] Ղեւոնդ Չէպէյեան, Հայ եկեղեցւոյ եօթը խորհուրդները, Անթիլիաս-Լիբանան, 1988, էջ 44:
[21] Դերենիկ եպս., նշվ. աշխ., էջ 88:

միությունը բեղմնավորվի և տուն, ընտանիք կազմվի, և եկեղեցին զորանա նոր ուժերով: Քանի որ ամուսնությունը հիմնված է ողջախոհության վրա, հետևաբար պետք է այր ու կին զգուշանան բղջախոհությունից և չապականեն իրենց ամուսնության միությունը պոռնկությամբ և շնությամբ[22]:

Ամուսնությունը՝ ամենասերտ դաշինքը, կապը, ուխտն է, որ կարող են առհասարակ երկու մարդ ունենալ իրար հետ: Ո՛չ ազգությունը և ո՛չ էլ բարեկամությունը երբեք չեն կարող այդ աստիճանի մտերմություն ներշնչել մի դաշնակցության կամ ուխտի մեջ: Մարդկային ոչ մի դաշն չի կարող տղամարդուն այնքան նեցուկ և խրախույս լինել առաքինության հանդեսի և աստվածային արքայության ընտանիք կազմելու գործի մեջ, որքան այն ամուսնությունը, որ եկեղեցու այդ սուրբ խորհուրդով մտնում է Աստծո օրհնության, վայելքների ու նրա արքայության անդամակցության մեջ[23]:

---

[22] Քրիստոնէական ըստ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ վարդապէտութեան յատկապէս պատրաստուաք մեր ազգային վարժարաններու եւ կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչներուն եւ ուսանողներուն համար, Անթիլիաս-Լիբանան, 1971:
[23] Արշակ Տեր-Միքելյան, նշվ. աշխ., էջ 458:

Գլուխ 2: Պսակի բաղադրատարրերի (նշանօրհնեք և պսակ) կատարման կարգը

Պսակի և ամուսնության արարողությունը ամուսնացող զույգի սիրո և հավատարմության ուխտն է Աստծո և հանրության առջև: Խորհուրդը կատարվում է եկեղեցում՝ ժողովրդի և խաչեղբոր վկայությամբ: «Պսակը եկեղեցու մեջ պետք է կատարել, այլապես անվավեր կհամարվի...» (Դվին Ե ժողով, կանոն ժ)[24]:

4-րդ դարում պսակը եկեղեցում օրհնելը բաղձալի երազանք էր հոգևոր դասի համար: Պսակի օրհնությունը հաճախ կատարվում էր ամուսնացողների տանը՝ հարսանյաց հանդեսի ժամանակ: Դա ամենից առաջ երևում է նրանով, որ դարաշրջանի ոչ մի կանոնախմբում չկա կանոնական նորմ պսակը եկեղեցում օրհնելը պարտադիր կարգ ճանաչելու մասին: 5-րդ դարում սահմանափակվում է պսակի օրհնությունը ամուսնացողների տանը: Թեև Շահապիվանի ժողովը կանոն չի ընդունել պսակադրությունը եկեղեցում կատարելը պարտադիր ճանաչելու վերաբերյալ, բայց Գ և ԺԳ կանոնների բովանդակությունը վկայում է, որ պսակադրությունը կատարվում էր եկեղեցում մեծ հանդիսավորությամբ, եկեղեցու գլխավորների ու քահանաների մասնակցությամբ: Եկեղեցում պսակադրվելու փաստը հավաստում է Բարսեղ Կեսարացուն վերագրված «Վասն պէսպէս..» կանոնախմբի ՃԶԸ և ՄԺՍ կանոնները[25]:

Օձնեցին պսակի արարողության մեջ անկարգություն է տեսնում, այն է՝ պսակադրությունը առանց ժամի և աղոթքի, օրհնության և հաղորդության եկեղեցուց դուրս ինչ-որ տեղ էր տեղի ունենում: Քահանան թողնում էր, որ պսակը ինչ-որ մեկը տանի և դնի փեսայի գլխին. մի բան, որով ամուսնության պարտականությունը արհամարհվում էր: Բայց հայրապետը ավելի զարմացավ, երբ տեսավ, թե ինչպես էր քահանան մասնակցում կերուխումին: Այս ամենն էլ պատճառ դարձավ, որ Օձնեցին կարգավորի պսակը՝ բարձրացնելով եկեղեցական խորհուրդի արժեքի՝ չնայած ի սկզբանե դրված էին կույս ամուսնացողների և այրիների միջև եղած տարբերությունները[26]:

Եկեղեցու հայրերը պատվիրում էին պսակը կատարել եկեղեցու պաշտոնյայի օրհնությամբ: Իգնատիոս Աստուածազգյաց հայրապետը ասում էր. «Այն հաւատացեալները, որոնք ամուսնանալ կը փափաքին պէտք է եպիսկոպոսի հրամանով կատարեն հարսանիքը, որպեսզի իրենց ամուսնութիւնը Աստուծոյ կամքին համաձայն ըլլայ»:

Եկեղեցին որևէ ամուսնություն խորհուրդ չի համարում, եթե քահանայի ձեռքով չի կատարված: Բոլոր խորհուրդների պաշտոնակատարը քահանան կամ եպիսկոպոսն է, հետևաբար այս կանոնում ամուսնությունը բացառություն չի կարող կազմել: Կաթոլիկ եկեղեցում պսակի պաշտոնյան պսակվող այրն ու կինն են, ինչը որ հիմնական սխալն է[27]:

Կանոնք Առաքելականի ԼԳ կանոնում ևս նշվում է այդ մասին. «սահմանեալ եւ հաստատեալ հրաման առաքելական սրբութեամբ զուգել զամուսնութիւն, եւ օրինօք ի ձեռն աջոյ քահանայութեան եւ օրհնութեամբ զուգիցեն»[28]:

Կարևոր հարց է պսակը կատարելու ժամանակի խնդիրը:

Օրացույցերում սովորաբար նշանակվում էին այն օրերը, երբ կարելի էր հարսանիք անել:

---

[24] Պսակ, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002, էջ 867:
[25] Հ. Հովհաննիսյան, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան, 1976, էջ 157-158:
[26] Նախատարերք հայ եկեղեցագիտութեան, դասախոսութիւնք Ամեն. Օրմանեան եւ Դուրեան Մ. արքեպս.-ներու Գեր Տ. Գնել եպ. Գալէմքեարեանի քահանայից լսարանին մէջ, Կ. Պոլիս, 1915, էջ 63-65:
[27] Շ. Գալուստեան, Տեղիք Աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993, էջ 58:
[28] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ.Ա, Երևան, 1964, էջ 47-49:

Ամբողջ շաբաթվա ընթացքում թույլատրվում էր, բայց բուն կիրակիի օրը՝ ոչ: Ընդհանուր կանոն է, որ այն օրերը, երբ պիտի պահք պահվի կամ տերունի տոներ են, հարսանիք չպետք է արվի: Այսինքն՝ հարսանիք պետք է անել սրբոց տոներին և երբ պահքի օր չէ: Սովորաբար անում են Բշ. (երկուշաբթի), Գշ. և Եշ. օրերին, ինչպես նաև շաբաթ օրերին՝ մինչև կիրակամուտի ժամերգությունը: Օրերը եկեղեցական օրենքով երեկոյից երեկո են հաշվում, հետևաբար Շաբաթ երեկոյից հետո կիրակամուտ է, ինչպես և կիրակի երեկոյից հետո երկուշաբթի է[29]:

Պսակի խորհուրդը կատարելիս քահանան պետք է հաշվի առնի թույլատրված օրերը, որոնք հաստատվել են Գևորգ Ե հայրապետի կոնդակով:

Պսակի համար թույլատրված օրերն են.

1. Ծննդյան ութօրեից, հունվարի 8-12-ը,
2. Հունվարի 14-ից մինչև Առաջավորաց Պահոց Բարեկենդան,
3. Առաջավորաց Պահոց շաբաթ օրից մինչև Բուն Բարեկենդան,
4. Նոր կիրակիի երկուշաբթիից մինչև Վարդավառի Բարեկենդան,
5. Վարդավառի երկուշաբթիից մինչև Սբ. Աստվածածնի Բարեկենդան,
6. Սբ. Աստվածածնի երկուշաբթիից մինչև Խաչվերացի Բարեկենդան,
7. Խաչվերացի երկուշաբթիից մինչև Հիսնակի Բարեկենդան,
8. Հիսնակի երկուշաբթիից մինչև Սբ. Ծննդյան Բարեկենդան,

Պսակի համար արգելված օրեր են՝

1. տարվա բոլոր կիրակի օրերը՝ առանց բացառության,
2. ամեն չորեքշաբթի և ուրբաթ օրերը,
3. հինգ տաղավարների մեռելոցի օրերը,
4. Սբ. Ծննդյան, Անվանակոչության, Տեառնընդառաջի, Ավետեաց և Համբարձման օրերը,
5. ամբողջ Մեծ Պահոց (քանի որ ապաշխարության և սգի տոներ են, և անպատեհ է ամուսնություն կատարել, ինչպես նաև խրախճանք անել) և զատկական 1-ին ութ օրերը, այսինքն Բուն Բարեկենդանից մինչև Նոր կիրակին ներառյալ,
6. Առաջավորաց, Վարդավառի, Սբ. Աստվածածնի, Խաչվերացի, Հիսնակաց և Սբ. Ծննդյան շաբաթապահոց 5 օրերը[30]:

«Կանոնագիրք հայոց»-ում տեսնում ենք այդ արգելված օրերի մասին համապատասխան կանոններ, ինչպես 2-րդ Նիկիականի ԺԶ կանոնը. «Ոչ է պարտ ի Քառասներորդսն կամ յաւուր Պենտեկոստէից կամ ի կիւրակէսն յամենայն հարսանիս կատարել»[31]:

Եպիփանի կանոնախմբի Ե-րդ կանոնում նշվում է. «Որք ի Զատկէն մինչեւ ցՊենտակոստն եւ յամենայն կիւրակէ պսակ դնեն՝ նզովեալ եղիցին...»[32]:

Եղիշե վարդապետի կանոնախմբի Ա կանոնում նշվում է, որ կիրակի օրերին և տոն օրերին չպետք է պսակ կատարել[33]:

Օձնեցու կանոնախմբի Գ (չանել շաբաթ օրերին և ճրագալույցին), Դ և Ե (չանել քառասնորդաց

---

[29] Մ. Օրմանյան, Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1979, էջ 42:
[30] Անուշ. եպս. Ժամկոչյան, Ամուսնաընտանեկան իրավունքի կանոնական և աշխարհիկ դրսևորումները հայոց մեջ, Հայ Աստվածաբան, Երևան, 2011, էջ 18: Նորայր Պողարյան, նշվ. աշխ., էջ 26-27: Դերենիկ եպս., նշվ. աշխ., էջ 93-94:
[31] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, Երևան, 1971, էջ 89:
[32] Նույն տեղում, էջ 63:
[33] Նույն տեղում, էջ 64:

պահքին, Զատկին, մինչև Պենտեկոստե) կանոնները ևս անդրադառնում են արգելված օրերին[34]:

Ամուսնության պսակը խորհրդակատարության 2 մասերից է բաղկացած՝ նշանադրություն և պսակ:

Նշանադրություն: Նշանադրությունը պսակվելուց առաջ 2 կողմերի համաձայնությամբ կայացած ուխտն է, ըստ որի՝ տղամարդն ու աղջիկը խոստանում են իրար սիրել, հավատարիմ լինել և մոտ ապագայում ամուսնանալ:

Նշանադրության իմաստը մեր Մաշտոցներում բացատրվում է հետևյալ կերպ. «Նշանն է սկիզբն պսակին. զի զօր օրինակ ծառն նախ ծաղկին նշանաւն եւ ապա պտղաբերին պսակաւն: Արդ պարտ է քահանային նախ՝ քննել եւ ընտրել կանոնօք զփեսայն եւ զհարսն, զի մի՛ լիցին ազգակիցք հոգեւոր եւ մարմնաւոր, եւ մի՛ լիցին ազգակիցք հոգեւոր եւ մարմնաւոր, եւ մի՛ աննմանք միմեանց, որպէս կոյս ընդ պոռնկի եւ կամ մանուկ ընդ պառաւոյ: Այս լիցի փեսայն առ նոսալն տանն եւ ութ եւ հարսն հնգետասան կամ վեշտասան ամաց»[35]:

Նշանադրության ժամանակ վրա են դնում մատանիները և կանգնեցնում դեմ-դիմաց: Քահանան արարողությունը սկսում է «Հայր մեր, որ յերկինս...» աղոթքով, ապա երգում «Նշանաւ ամենահաղթ...» շարականը, ասում «Օրհնեալ ես, Տէր Աստուած...» աղոթքը: Այս ամենից հետո փեսացուն մատանին անցկացնում է հարսնացուի աջ մատնեմատին, և հակառակը: Այնուհետև քահանան խրատներ է ասում, որից հետո սարկավագը ասում է «Սուրբ խաչիւս աղաչեսցուք...» քարոզը և «Պահպանիչ եւ յոյս հաւատացելոյ...» աղոթքը: Արարողությունը փակվում է «Հայր մեր, որ յերկինս...» աղոթքով[36]:

Նշանադրության մասին մեր եկեղեցական կանոնադրության մեջ հանդիպում ենք Օձնեցու ԺԶ, Հովհ. Երզնկացու (14-րդ դ.) գրվածքներում[37]:

Պսակ: Որպեսզի պսակը օրինավոր և վավերական լինի, անհրաժեշտ է որ հարսն ու փեսան լրացնեն հետևյալ պայմանները.

ա. <u>աղջիկն ու տղան պետք է սիրով և իրենց ազատ կամքով որոշեն ամուսնանալ իրար հետ:</u> Այդ նպատակով ամուսնությունից առաջ եկեղեցին «Նշանախօսություն» է կատարում, որպեսզի մի քանի ամիս ժամանակ տա նշանվածներին իրար հետ ծանոթանալու և Պսակին հոժարակամ ներկայանալու համար[38]:

Ամուսնությունը պետք է կատարվի առանց բռնության, 2 ենթակաների սիրահոժար կամքով: Բռնությամբ կատարված պսակը անվավեր է, քանի որ եկեղեցին ընդունում է, որ տղամարդու և կնոջ միջև եղած հոգեկան անքակտելի միությունը առաջ է գալիս միմյանց հանդեպ անկեղծ սիրուց: Մաշտոցում նշվում է «մի մարմին, միաւորեալ, հոգւով հեզութեան ...սուրբս, անարատս, միաշունչս եւ միախորհուրդս»[39]:

Հայ կանոնական իրավունքի ուսումնասիրությունից բխում է, որ Սահակի ԻԷ և ԻԸ կանոնները զարգացման նոր աստիճան են խորհրդանշում փոխհաճությամբ պսակն օրհնելու խնդրում: ԻԷ կանոնը հրամայում էր քահանաներին չօրհնել անչափահասների պսակը առանց միմյանց տեսնելու և

---

[34] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ.Ա, էջ 517-519:
[35] Դերենիկ եպս., նշվ. աշխ., էջ 99:
[36] Մաշտոց, Ս. Էջմիածին, 2001, էջ 28-30:
[37] Վ. Բաստամեան, Ամուսնութիւնը ըստ հայոց եկեղեցական իրաւաբանութեան, «Փորձ» ազգային և գրականական միամսեայ հանդէս, 4-րդ տարի, հոկտեմբեր, N 10, Տփխիս, 1880, էջ 39-40:
[38] Մեսրոպ վարդապետ, նշվ. աշխ., էջ 65:
[39] Դերենիկ եպս., նշվ. աշխ., էջ 92-93:

փոխադարձ համաձայնության[40]:

Այս հարցին են անդրադառնում նաև Դվինի 2-րդ ժողովի ԼԴ կանոնը, Ներսես Շնորհալու Ընդհանրական թուղթը[41]:

Ամուսնության տարածված եղանակներից էր «աղջկա առևանգությունը»: Առևանգման հետևանքով բռնադատվում էր թե՛ փոխհաճությամբ ամուսնանալու զավակի իրավունքը, և թե՛ «տան աղջկան» կամ դստերը ամուսնացնելու ծնողների ավանդական իրավունքը: Կանոնական և աշխարհիկ օրենսդրությունն ամենայն խստությամբ հետապնդում էր առևանգումը՝ սահմանելով ներգործության կանոնական, քաղաքացիական և քրեաիրավական միջոցներ: Առևանգումը ծնում էր մեծ ու անուղղելի անախորժություններ առևանգողի, նրա օգնականների, առևանգողի ընտանիքի և, ի վերջո, առևանգված աղջկա համար[42]:

Գոշը իր «Դատաստանագրքի» ԾԳ և ՃՂԸ գլուխներում անդրադառնում է այս հարցին: ԾԳ գլխում նշվում է, որ եթե առևանգված աղջիկը որդի է ծնում, բայց չի ուզում պահել, ապա երեխային տալիս են առևանգողին: ՃՂԸ գլխում նշվում է, որ եթե առևանգվածին կինն է դարձնում, բայց հետո հետ վերադարձնում, ապա պիտի անարգանքի տուգանք վճարի[43]:

«Կանոնագիրք հայոց»-ի Ա հատորի Սբ. Գրիգորի կանոնախմբի Թ, Կեսարացու ԺԲ և ԺԵ, Շահապիվանի Է կանոններում խոսվում է առևանգման դեպքում հասանելի պատիժների մասին, իսկ Սևանտեայի Թ և Ժ, Սիոնի ԻԳ, 2-րդ Նիկիական ԻԳ, Բարսեղի ՄԻ, Ներսեսի Դ կանոններում արգելվում է «խօսեալ աղջկան» առևանգել[44]:

Փոխհաճությամբ ամուսնանալու իրավունքի իրացման ուրույն ձև էր «գաղտ պսակը»: Գաղտը, որ կամ նույն է՝ ծածուկ կամ գաղտնի պսակը, 4-5-րդ դարերում կանոնական նորմերով կարգավորվող հարաբերություն էր: Այն սերտորեն կապված էր անձի ազատ հաճությամբ ամուսնանալու իրավունքի հետ և ուղղված էր ծնողների՝ իրենց զավակներին ամուսնացնելու իրավունքի դեմ[45]:

Կանոնական բնագրերում կան շատ կանոններ, որոնցից են Կեսարացու «Վասն պէսպէս...» կանոնախմբի ՃԿԸ, Գրիգորի Ը կանոնները, որոնցում եկեղեցականներից պահանջվում էր գաղտնի պսակ չանել[46]:

Կարևոր է նաև կողմերի փոխհաճությամբ ամուսնանալու և ծնողների, այդ թվում նաև հոգաբարձուների, ստրկատերերի, համաձայնությամբ ամուսնանալու խնդիրը:

4-5-րդ դարերում հոգևոր առաջնորդները մի կողմից պաշտպանում էին ծնողների և մարմնավոր տերերի համաձայնությամբ որդիների և ծառա աղախինների ամուսնանալու գաղափարը, մյուս կողմից էլ իրավական հուշ պատրաստում զավակների հաճությամբ պսակադրության համար: Այդ դարում հատուկ կանոնական նորմ չկար, որը պարտադիր պայման էր համարում զավակի ընտրության հարցում հոր կամքի կարևորությունը[47]:

Հոգաբարձուների համաձայնության դեպքում պետք է ասել, որ և՛ արևմտյան, և՛ արևելյան

---

[40] Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 203:
[41] Տե՛ս Վ. Բաստամեան, նշվ. աշխ., էջ 41-42:
[42] Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 203:
[43] Մ. Գոշ, Դատաստանագիրք, Երևան, 2001, էջ 69, էջ 137:
[44] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ.Ա, էջ 246, էջ 343, էջ 346, էջ 439-440, էջ 343, էջ 473, էջ 473: Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ.Բ, էջ 17, էջ 47, էջ 77, էջ 161, էջ 288:
[45] Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 209:
[46] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ.Ա, էջ 143: Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ.Բ, էջ 246:
[47] Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 218:

երկրներում հնուց սովորություն կար խնամակալին կամ հոգաբարձուին տալ որբ մնացած անչափահաս մանուկներին: Սովորաբար հոր մահից հետո բնական խնամակալ կամ հոգաբարձու էր համարվում մայրը, իսկ մոր մահից հետո՝ հայրը: Ծնողները իրենց մեռնելու ժամանակ կարող էին իրենց զավակների համար հոգաբարձուներ նշանակել, իսկ եթե չէին հասցնում, ապա պետությունն էր հոգում այդ հարցը[48]:

Թեև Հայոց Կանոնագրքում մի շարք անգամ հանդիպում է «հոգաբարձություն» տերմինը, բայց այն չի կոնկրետացված առարկայի վրա: Այդ բացը լրացնում է Դատաստանագրքի 60-րդ հոդվածը, որտեղ նշվում է, որ հոգաբարձուի համաձայնությունն էր պետք աղջկա ամուսնության համար[49]:

Ինչ վերաբերվում է ստրկատերերի համաձայնությանը, պետք է ասել, որ հին ժամանակներում դա արդիական էր, քանի որ ստրուկները զուրկ էին բոլոր տեսակի իրավունքներից և մշտապես իրենց տերերի հլու հպատակներն էին: Այստեղից տերերի իրավունքը մտել է կանոնական օրենսդրության մեջ (ինչպես՝ Աթանասի ԻԸ, Բարսեղի «Առ Ամփիղոքոս» կանոնախմբի ԻԱ, ԻԳ կանոնները)[50]:

բ. <u>կատարյալ մարմին</u>. Այս պայմանը անհրաժեշտ էր ամուսնության բուն նպատակը՝ որդեծնությունը, իրականացնելու համար: Ըստ այդմ ներքինները, ամուլները, կնատները չեն կարող ամուսնանալ[51]:

գ. <u>չափահասություն</u>. Եկեղեցին տղաների համար արբունքի շրջան համարել է 12 տ., իսկ աղջիկների համար՝ 11 տ., ուստի նախընտրելի էր համապատասխանաբար 12-15տ. և 11-14 տ. հասակը: Իրականում ամուսնության հաս-չհասը որոշող քահանան, որի մոտ պահվում էին չափաբերական մատյաններ, ամուսնությունները ձևակերպում էր վաղ հասակում, բայց չափաբերական մատյաններում գրանցում 17-18տ.: Նման անճշտությունները քահանան գիտակցաբար էր անում, որովհետև ըստ եկեղեցու կանոնի՝ աղջկա համար 17տ-ն էր սահմանված թույլատրելի հասակ[52]:

Ամուսնության պայմաններից չափահասությանը հանդիպում ենք Կեսարացու «Վասն պէսպէս...» կանոնախմբի ՄԺԹ, Ներսեսի և Ներշապուհի ԻԴ կանոններում, ինչպես նաև Դատաստանագրքի ՃՂԲ կանոններում[53]:

դ. <u>կանոնական հասունություն</u>. Այս պայմանը նշանակում է, որ ամուսնացողները ազգակցական կապերից հեռու պիտի մնան:

Մեր եկեղեցում արյունակցական պորտերի թիվը տարբեր ժամանակներում տարբեր է եղել: Հայոց եկեղեցին 13-րդ դարում սահմանագրեց, որ պսակվողները 7 աստիճանով կամ պորտով պիտի իրարից բաժանվեն: Ներսեսը Աշտիշատի ժողովով արգելեց ազնվական դասի մոտ տարածված մերձամուսնությունը՝ չնայած ժողովը որոշակի աստիճան չնշանակեց: Շահապիվանի ժողովի ԺԳ կանոնով թույլատրվում էր միայն մինչև 4-րդ աստիճանի ամուսնությունը: Ներսես Շնորհալին նշում է, որ 2 կողմից 4-ական պորտ պիտի լինի, այսինքն՝ կարող էին ամուսնանալ 9-րդ և 10-րդ պորտերի դեպքում: Սսի ժողովի Ե կանոնով էլ ազգակցական ամուսնություն թույլատրվում էր միայն 7-րդ պորտին: Այս կանոնը գործեց մինչև Գևորգ Ե կաթողիկոսի կոնդակը (1922թ. Նոյեմբերի 11), ըստ որի՝

---

[48] Վ. Բաստամեան, նշվ. աշխ., էջ 58:
[49] Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 222:
[50] Նույն տեղ, էջ 223-224:
[51] Քրիստոնէական ըստ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ վարդապէտութեան..., էջ 83:
[52] Անուշ. եպս. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 16-17:
[53] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 160-161: Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 487: Մ. Գոշ, Դատաստանագիրք, էջ 134:

արտոնվում էին ազգակցական 5-րդ և խնամիական 4-րդ աստիճանի պսակները[54]:

Աստիճան կամ պորտ նշանակում է մի անձի կողմից մյուսի նկատմամբ ունեցած արյունակցական կապ՝ ըստ ծնունդի: Յուրաքանչյուր ծնունդ համարվում է 1 աստիճան կամ պորտ՝ հորից սկսած: Օրինակ, որդին հոր նկատմամբ 1 աստիճան է, իսկ թոռը՝ 2, քանի որ 2-րդ ծնունդ է: 2 եղբայր կամ քույր միմյանց նկատմամբ 2 պորտ են, քանի որ 2 ծնունդ են: Տղամարդն ու կինը առանձին պորտ չեն կազմում, քանի որ նրանք 1 մարմին են: Զավակներն իրենց ծնողների նկատմամբ 1 պորտ են, իսկ իրար նկատմամբ՝ 2 պորտ: Հոր ու խորթ մոր կամ մոր ու խորթ հոր որդիները համարվում են 1 հոր և 1 մոր որդիներ, և նրանց պորտերը հաշվվում են հարազատ զավակների նման[55]:

Ա

Բ Գ

Դ Ե

Զ Է

Ա-ն Բ և Գ որդիների հայրն է,Դ-ն և Ե-ն թոռներն են, իսկ Զ-ն և Է -ն՝ ծոռները կամ թոռնորդիները: Բ և Գ որդիները Ա հոր նկատմամբ 2 պորտ են: Դ և Ե թոռները Ա հոր նկատմամբ 3 պորտ են, իսկ Զ և Է ծոռները Ա հոր նկատմամբ 4 պորտ են: Այսինքն՝ Ա-Զ 3 պորտ է, Ա-ի նմանապես գումար՝ 6 պորտ: Դ և Ե թոռները իրենք 2 ծնունդ են և իրենց հայրերը 2 պորտ են, ուստի կստացվի՝ 4 պորտ: Զ-ն և Է-ն ծոռներ են, որոնք 2 ծնունդ են, 2՝ իրենց ծնողները, 2 էլ նրանց նախորդները, այսինքն՝ 6 ծնունդ կամ պորտ: Այս ճյուղագրության մեջ համաձայն Գևորգ Ե կաթողիկոսի Զ-ն կարող է ամուսնանալ Ե-ի հետ, իսկ Է-ն՝ Դ-ի որովհետև գումարը 5 պորտ է ստացվում:

Դայակությունը մայրական կապ է ստեղծում 2 կողմերի, առավելապես ստնդիայի և ստնտուի զավակների միջև: Այդ պատճառով նրանց միջև ամուսնությունը ներելի չէ: Արշակունյաց շրջանում, երբ բուն ազգականության կապը դեռ չէր հարգվում, հնարավոր չէ, որ այս արգելքը գոյություն ունենար: Այդ շրջանում հանդիպում ենք դայակի և սանի ամուսնություն: Միջին դարերում է, որ հնարվում է այդ արգելքը և երևում է Թադեոսին վերագրված կանոնախմբի Լ կանոնում, որը կրկնում է Գոշը և հաստատում Դավիթ վարդապետը՝ «Մին մօր կաթամբ սնեալ մանկունք արու և էգ՝ մի՛ զուգեսցին ընդ միմեանս. Քանզի յաղագս կաթնասանութեանն ի մի ստինք՝ մի եղեն»: Նույնը մեկնում են նաև Հովհ. Երզնկացի և Հակոբ Ղրիմեցի վարդապետները[56]:

Ըստ Գևորգ Ե կաթողիկոսի կոնդակի՝ խնամիական, այսինքն՝ ոչ արյունակցական, ամուսնությունը թույլատրելի էր մինչև 4-րդ աստիճան, իջեցվել էին նաև կնքահայրությամբ հոգևոր ազգականություն, Ս. Մյուռոնի միջոցով որդեգրության, կաթեղբայրության աստիճանները[57]:

Խնամիների ամուսնության դեպքում, եթե մի կողմը լիներ 3 պորտ, իսկ մյուսը՝ 4, ապա պսակը թույլատրելի էր համարվում: Իսկ դրանից ավելի ցածրի դեպքում քահանան և ժողովուրդը ենթարկվում էին հայրապետների անեծքին և զրպարտությանը:

Աստված Օվսէ մարգարեի միջոցով սպառնում էր այդպիսիններին. «Թող այս [երկիրը] եւ

---

[54] Դերենիկ եպս., նշվ. աշխ., էջ 90:
[55] Անուշ. եպս. Ժամկոչյան, նշվ. աշխ., էջ 10:
[56] Վարդան Հացունի, Դաստիարակութիւնը հին հայոց քով, Վենետիկ, 1923, էջ 32-33:
[57] Դերենիկ եպս., նշվ. աշխ., էջ 91:

նուազին երկրի բնակիչները, որովհետեւ արիւնները իրարու կը խառնուին» (Օվսէ, Դ, 3), այսինքն՝ ազգականների արյունը ամուսնությամբ խառնվում է իրար, որը սբ. հայրերի կանոններով արգելվում է[58]:

Բողոքականների համար խնամիությունը ամուսնության որևէ արգելք չի համարվում: Հայ եկեղեցու կողմից խնամիական կամ ազգակցական պատճառով պսակվել արգելված տղամարդն ու կինը բողոքական հովիվների կողմից ամուսնանում էին[59]:

«Կանոնագիրք հայոց»-ում նշվում են կանոններ, որոնք մերժում են ազգականի հետ ամուսնանալը, ինչպես Կղեմեսի ԺԷ, Աթանասի ԺԶ, ԺԷ, Շահապիվանի ԺԳ կանոնները, նաև Բ գրքից Թադեոսի ԼԱ, Բարսեղի ՀԱ, Ներսեսի ԻԴ կանոնները, որոնցում ասվում է, որ չպետք է ամուսնանալ քեռորդու, հարազատ եղբոր, եղբոր կնոջ հետ, որը չանելու դեպքում ապաշխարանք է սահմանվում[60]:

ե. <u>ազգային և կրոնական նույնություն.</u> Ընտանեկան կյանքի խաղաղության համար այր և կնոջ միևնույն ազգին և կրոնին պատկանելը կարևոր է: Իսկ եթե զանազան պատճառներով արտոնվում է օտարների հետ ամուսնանալ, ապա պետք է նկատի ունենալ հետևյալ պայմանները.

1. Օտարադավան մեկը, եթե ուզում է պսակվել հայ եկեղեցու զավակի հետ հայ ծեսով հայ եկեղեցու մեջ, ապա պետք է գրավոր ընդունի հայ եկեղեցու դավանանքը:

2. Ոչ քրիստոնյան, եթե ուզում է պսակվել, ապա գրավոր պետք է հայտնի իր փափագը, մկրտվի, դրոշմվի, հաղորդվի և հետո միայն պսակվի:

3. Օտար հարանվանության պատկանող մի հայ, եթե չի դրոշմված, ապա պիտի դրոշմվի և նոր պսակվի հայ եկեղեցում[61]:

Այլադավանի հետ ամուսնության արգելքը հետապնդել է ոչ այնքան դավանական, որքան քաղաքական նպատակներ: Պետականության բացակայության պայմաններում մեր նախնիները դավանական կանոններով[62] ուծացումից պաշտպանել են հայ ժողովրդի դեմքը[63]:

Այսպիսով, այն երիտասարդները, որոնք կբավարարեն այս բոլոր պայմանները, կարժանանան պսակի:

Խորհրդակատարության 2-րդ մասը՝ «Կանոն Պսակին» է, որը բաղկացած է «Ձեռնատվությունից» և «Պսակադրությունից»: Ձեռնատվությունը փոխադարձ խոստում է, դաշինք տղամարդու և կնոջ միջև, որը կնքվում է եկեղեցում Աստծո և ժողովրդի ներկայությամբ: Իսկ պսակը նոր կազմված ընկերային միություն է, որը եկեղեցին ընդունում և օրհնում է: Այս նոր «օրգանը» միանում է եկեղեցու մարմնին, կազմում մի թագավորություն (որի համար պսակ է կոչվում), որի մեջ հայրը թագավորն է, մայրը՝ թագուհին, և զավակները հպատակներն են: Ընտանիքը կգործածի Աստծո ստեղծագործության հետ և կծնի ու կկրթի զավակներ, Աստծո արքայության քաղաքացիներ:

Տաներեց քահանան գնում է նախ փեսացուի տուն և հետո հարսի՝ «հալաւօրհնեք» կատարելու: Երգում են «Այսօր երկրայինքն ուրախացան» շարականը, ապա քահանան խաչակնքում է հանդերձի վրա. «Օրհնեա՛, Քրիստոս Աստված մեր սարքեաց հոգևոր օրհնությունը մեր զայլևս զայս

---

[58] Հովհ. Երզնկացի, Խրատ բոլոր քրիստոնեաներուն, Անթիլիաս, 1984, էջ 41-42:
[59] Դերենիկ եպս., նշվ. աշխ., էջ 92:
[60] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 79, էջ 297, էջ 297, էջ446: Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 39, էջ 118, էջ 260-261, էջ 261:
[61] Ղ. Չեպչեան, նշվ. աշխ., էջ 45-46:
[62] Այդ կանոններից են՝ Առաքելական կանոնախմբի ԺԶ, Լավոդիկեի ԼԱ, Ժ, Աթանասի ՁԲ և ՁԳ, Ներսեսի ԺԲ և ԺԳ, Կյուրեղ Ալեքսանդրացու Գ և այլն, նաև Գոշի ՃԿԳ կանոնը:
[63] Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 258:

Մաշտոցում առանձնացվում է նաև «Կանոն երկրորդ պսակին», որը ցույց է տալիս, որ մեր եկեղեցին ընդունում է երկրորդ պսակը[68]:

Երկրորդ պսակի մասին տեսնում ենք նախ կանոններում, ինչպես Սիոնի Դ, 2-րդ Նիկիական Թ, Բարսեղի «Վասն պէսպէս...» կանոնախմբի ՄԸ, Նեոկեսարիայի Է, Աթանասի ԿԷ կանոններում, որոնցում սերմանվում է ապաշխարանքի որոշակի ժամանակահատված[69]:

2-րդ պսակի օրհնությունը ուներ մի շարք տարբերվող առանձնահատկություններ: Դրանցից մեկը այն էր, որ պսակվողների գլխին խաչի փոխարեն դրվում էր ուռ կամ բավարարվում էին միայն խաչակնքվելով: Երկակի պսակը իր ծիսական գործողությունների ճոխությամբ զգալիորեն զիջում էր կուսանի պսակի օրհնությանը: Բացի այդ, 4-րդ դարում ընդունված կանոնները (Նեոկեսարիայի Է, 2-րդ Նիկիական ԼԹ), քահանային արքելում էին լինել 2-րդ կին առնողի հարսանիքին, «զի ոչ են հարսանիք, այլ լոկ հացուտիք»: Մյուս առանձնահատկությունն այն էր, որ 4-րդ դարում երկակիության համար նշանակում էին 3-4 տարի տնողությամբ ապաշխարանք, մինչդեռ Շահապիվանի որոշումների ընդունումից հետո, տնողությունը և ձևը առաջնորդի հայեցողությանը թողնվեց[70]:

Ինչ վերաբերվում է 3-րդ պսակին, ապա մեր եկեղեցին չի ընդունում: Բարսեղի «Վասն պէսպէս...» ՄԹ կանոնը ուղղված է այս խնդրին. «իսկ երրորդացն և չորրորդացն ոչ է ամուսնութեան, այլ տարածում պոռնկութեան, էլ ոչ զայնպիսիսն ընդունի եկեղեցի, բայց առաջնորդն իշխան է ժամանակին ուղղել»[71]:

Չնայած ամուսնությունների կարևորությանը՝ կային այնպիսիները, որոնք անգոսնում և չէին ընդունում դրանք: Այդ մասին տեղեկանում ենք կանոններից, որոնցով դատապարտվում են նրանք: Կղեմեսի ԻԶ կանոնում նշվում է, որ այն հոգևորականները, որ ամուսնությունները պիղծ են համարում, կարգալույծ պիտի արվեն: Գանգրայի Ա, Թ և Ժ կանոններում ամուսնությունը գարշելի և պիղծ համարողները նզովվում են: Բարսեղի «Վասն պէսպէս...»-ի ՀԲ կանոնում նշվում է, որ հավատի համար ամուսնությունը անարգողները և գարշ համարողները՝ նզովյալ կլինեն[72]:

Ամուսնությունը կարող է անվավեր համարվել հետևյալ դեպքերում.

1. երբ բռնությամբ է կատարվել:
2. երբ հաստատվում է, որ ամուսնացողներից մեկը մեկ ուրիշի հետ արդեն ամուսնացած է:
3. եթե պսակը գաղտնի է կատարվել:

Ամուսնալուծություն: Ամուսնալուծման հարցը միշտ խնդրո առարկա է եղել: Հեթանոսների մեջ այն սովորական իրողություն էր: Ամուսնու քմահաճույքը կարող էր խորտակել ամուսնական միությունը: Մովսիսական օրենքը ևս ուներ ամուսնալուծում, այսինքն՝ ապահարզանի կամ արձակումի թուղթ տալու գրություն:

Քրիստոս, նկատի ունենալով ապահարզանը, ասաց. «Մովսէս ձեր խստասրտութեան համար արտոնեց ձեզի արձակել ձեր կիները, սակայն սկիզբէն այդպէս չէր: Բայց կ՚ըսեմ ձեզի ով որ իր կինը կարձակէ, առանց պոռնկութեան պատճառի, եւ ուրիշ մը կ՚առնէ՝ կը շնայ, եւ որ արձակուածի կ՚առնէ՝ կը շնայ»: (Մատթ. ԺԹ, 8-10, Մարկ. Ժ, 2-12[73]:

---

[68] Մաշտոց, էջ 43-50:
[69] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 10, էջ 74, էջ 166; Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 181, էջ 317-318:
[70] Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 175:
[71] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Բ, էջ 166:
[72] Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց, հ. Ա, էջ 88, էջ 192-193, էջ 194, էջ 195, էջ 118:
[73] Ղ. Չեպեյեան, նշվ. աշխ., էջ 47:

Լատին եկեղեցին պսակը բացարձակապես անլուծելի է համարում: Վերը նշված ավետարանական համարներն էլ մեկնում է, թե դրանք ոչ թե ամուսնալուծում են նշանակում, այլ՝ բաժանում: Լատին եկեղեցին առհասարակ ամուսնալուծում չի կատարում: Ինչ-ինչ պարագաների դեպքում «ամուսնությունը ջնջված» է համարում՝ ցույց տալով ոչ վավերական լինելը: «Ամուսնության ջնջումը» ամուսնալուծություն չէ, այլ՝ անվավերականություն, որով և այն չեղյալ է համարվում[74]:

Ամուսնալուծությունը կատարում է հոգևոր վերին իշխանությունը: Եկեղեցին է պսակում և ամուսնալուծում: Հոգևոր վերին իշխանության իրավասությունն է օրինավոր քննություններ կատարելուց հետո ժողովի միջոցով կամ առանց ժողովի լուծել ամուսնությունը: Հոգևոր իշխանության մեջ եպիսկոպոսներ են, որոնք ունեն առաջնորդական պաշտոն: Բայց բոլորից վերև կաթողիկոսն է, որ վերջին խոսքը ասելու և վճիռ արձակելու իշխանություն ունի[75]:

Հայոց եկեղեցին օրինավոր պսակը անքակտելի համարելով հանդերձ ամուսնալուծում կատարում է հետևյալ պայմանների պարագայում.

1. Երբ այրը կամ կինը պոռնկանում են[76]:

2. Երբ ամուսիններից մեկը վարակված է անբուժելի և փոխանցվող հիվանդությամբ:

3.Երբ ամուսիններից մեկը վարակված է դիվահարությամբ կամ վտանգավոր խելագարությամբ[77]:

4. Երբ ամուսիններից մեկը յոթ տարուց ավել անհայտացած է[78]:

5. Երբ այրը անկարող է իր կնոջ կուսությունը խախտել և այդ անկարողությունը անբուժելի է[79]:

Մեր եկեղեցին ամուսնալուծում չի կատարում ամլության պատճառով: Գոշի Դատաստանագրքում, Սբ. հայրերի կանոնադրության և հայրապետների կոնդակների մեջ այս մասին մասնավոր հրահանգ կա: Սակայն Շահապիվանի ժողովը (Ե կանոն) բացահայտորեն ամլությունը իբրև ապահարզանի պատճառ է համարում՝ պայմանով, եթե կինը իր օժիտի հետ ամուսնուց նաև մասնավոր տուգանք ստանա: Ամուլ կնոջ արձակումը կատարվում է ոչ թե ամուսնու կամքով, այլ՝ եկեղեցական իշխանության քննությամբ և վճռականությամբ: Ըստ Գոշի, եթե ամլությունը ժառանգական է, ապա ամուսինը կարող է իր կնոջը արձակել և այլ կին առնել: Եթե պսակի ժամանակ աղջիկը 15տ. էր, իսկ տղան՝ 18տ., ապա ամուսնալուծման համար 7 տարի պիտի սպասեն: Եթե կինը չցանկանա մեկ ուրիշի հետ ամուսնանալ, ապա նրա ամուսինը պիտի հոգա նրա ծախսերը մինչև նրա մահանալը և վերադարձնի նրա օժիտը: Իսկ եթե ամուսինը մինչև ամուսնությունը գիտեր կնոջ ամլության մասին, ապա չի կարող բաժանվել: Նույնը վերաբերվում է հակառակ պարագային:

Մեր եկեղեցին կրոնափոխությունը ամուսնալուծման պատճառ չի ընդունում[80], բայց կարելի է բաժանում, որպեսզի քրիստոնյա կինը չմոլորվի: Բայց, եթե հավատուրաց ամուսինը ապաշխարհի, ապա կինը չպետք է բաժանվի: Ըստ Պողոս առաքյալի «սուրբ է կինն կրօնափոխ արամբն» (Ա Կորն, Է, 14): Նույնը վերաբերվում է հակառակ պարագային[81]:

---

[74] Դերենիկ եպս, նշվ. աշխ., էջ 95-96:
[75] Քրիստոնէական ըստ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ վարդապէտութեան..., էջ 96:
[76] Տե՛ս Նեոկեսարիայի ԺԱ, Սբ. Գրիգորի ԻԳ, Աթանասի ԿԱ, Շահապիվանի Դ և Ե, Բարսեղի Թ կանոներ, Գոշի Ժ:
[77] Տե՛ս Շահապիվանի Դ և Ե, Հարանց հետևողաց Է, Բարսեղի ՄԺ կանոններ, Գոշի Է, ՃՁԹ գլուխներ:
[78] Տե՛ս Դվինի Է կանոն, Գոշի ԺԶ գլուխ:
[79] Տե՛ս Գոշի Զ գլուխ:
[80] Տե՛ս Սբ. Գրիգորի ԻԴ, Աթանասի ԿԳ, Բարսեղի ԿԹ կանոներ:
[81] Դերենիկ եպս, նշվ. աշխ., էջ 97-98:

Վերջաբան

«Հարսանեական ծեսը քրիստոնեական կանոնների համատեքստում» հետազոտական աշխատանքով փորձեցինք ներկայացնել պսակի խորհուրդն և հիմնավորել մի քանի խնդիրներ։

Խնդիր էր դրված ներկայացնել հայ եկեղեցու խորհուրդներից մեկի՝ պսակի եկեղեցական արարողությունները, եկեղեցու հայրերի տեսակետները, պահպանված կանոնները։

Մյուս խնդիրն էր անդրադառնալ տարբեր ժամանակներում պսակի հետ կապված կանոններին։ Տեսնում ենք, որ դրանք ունեին ուսուցողական և ժողովրդին վատ ազդեցություններից պաշտպանելու գերխնդիր։ Ինչ վերաբերում է պսակի արարողությանը, ապա ներկայացվել է նրա երկու մասերի՝ նշանօրհնեքի և բուն պսակի անցկացման կարգը՝ իրենց համապատասխան աղոթքներով և ընթերցումներով։

Տարվա բոլոր օրերին չի թույլատրվում պսակի խորհուրդ կատարել, բացի այդ հաշվի է առնվում վավերական համարելու որոշակի պահանջներ, որոնց բացակայության դեպքում խորհուրդը չի կատարվում։

Խոսելով ամուսնության մասին՝ չենք անտեսել ամուսնալուծությունը, որի պատճառները բազում են։ Մեր եկեղեցին, սակայն, միայն որոշակի պայմանների առկայության դեպքում է ամուսնալուծություն իրականացնում։

Այսպիսով, ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից մարդուն արարելուց հետո (Ծննդոց Բ18-24)։ Ամուսնությունը երկու անձանց այնպիսի միավորում էր, որպիսին ոչ մի այլ պայմաններում չէր կարող լիներ։ Այն ուխտ էր Աստծո առաջ, ըստ որի՝ ամուսնացողները խոստանում էին մինչև կյանքի վերջը միասին լինել։

Օգտագործված գրականության ցանկ

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979:
2. Բաստամեան Վ., Ամուսնութիւնը ըստ հայոց եկեղեցական իրաւաբանութեան, «Փորձ» ազգային և գրականական միամսեայ հանդէս, 4-րդ տարի, հոկտեմբեր, N 10, Տփխիս, 1880:
3. Գալուստեան Շ., Տեղիք Աստուածաբանութեան, Երուսաղէմ, 1993:
4. Գոշ Մ., Դատաստանագիրք, Երևան, 2001:
5. Երզնկացի Հովհ., Խրատ բոլոր քրիստոնեաներուն, Անթիլիաս, 1984:
6. Ժամկոչյան Ա., Ամուսնաընտանեկան իրավունքի կանոնական և աշխարհիկ դրսևորումները հայոց մեջ, Հայ Աստվածաբան, Երևան, 2011:
7. Խորհուրդներ եկեղեցական, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002:
8. Կարգ հիվանդաց, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002:
9. Հակոբյան Վ., Կանոնագիրք Հայոց, հ. Ա, Երևան, 1964:
10. Հակոբյան Վ., Կանոնագիրք Հայոց, հ. Բ, Երևան, 1971:
11. Հաղորդություն, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002:
12. Հացունի Վարդան, Դաստիարակութիւնը հին հայոց քով, Վենետիկ, 1923:
13. Հովհաննիսյան Հ., Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Երևան, 1976:
14. Ձեռնադրություն, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002:
15. Մայիլեան Ա, Ոսկեփորիկ կրօնական գիտելիքների հանրագիտարան, մասն Բ, 1993:
16. Մաշտոց, Ս. Էջմիածին, 2001:
17. Մեսրոպ վարդապետ, Կրօնի գիրք, Քրիստոնէական Հայաստանյայց Ս. Եկեղացիի (Ե տարի), Պէյրութ, 1968:
18. Մկրտչյան Ա., «Նախաշաւիղ քրիստոնեական կրթության», Մայր աթոռ Սբ. Էջմիածին, 1990:
19. Նախատարերք հայ եկեղեցագիտութեան, դասախոսութիւնք Ամեն. Օրմանեան եւ Դուրեան Մ. արքեպս.-ներու Տեր Գնէլ եպս. Գալէմքարեանի քահաբայից լսարանին մէջ, Կ. Պոլիս, 1915:

20. Չէպէյեան Ղեւոնդ, Հայ եկեղեցւոյ եօթը խորհուրդները, Անթիլիաս-Լիբանան, 1988:
21. Պսակ, Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան, Երևան, 2002:
22. Պողարեան Ն., Կանոնագիտություն, Երուսաղեմ, 1992:
23. Տեր-Միքելյան Արշակ, Հայաստանյայց Սուրբ եկեղեցու քրիստոնեականը, Սբ. Էջմիածին, 2007:
24. Քրիստոնէական ըստ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ վարդապետութեան յատկապես պատրաստուաք մեր ազգային վարժարաններու եւ կիրակնօրեայ դպրոցներու ուսուցիչներուն եւ ուսանողներուն համար, Անթիլիաս-Լիբանան, 1971:
25. Օրմանյան Մ., Ծիսական բառարան, Անթիլիաս-Լիբանան, 1979: